Հասցեատեր՝
«Նոա ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ noah@noah.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08.05.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Նազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նազելի Արսենյան
	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝ ՊԼ-141

Խախտում՝

1. Խաղի ժամանակահատվածում հյուր թիմի երկրպագուների կողմից անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ)
2. Հյուր թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտ իրեր նետելը (Հավելված 1 Ա, 24-րդ կետ)
3. «Նոա» թիմի ֆուտբոլիստ Գոնսալո Դե Ալմեիդա Գրիգորիոյի (53905) կողմից մրցակից թիմի գլխավոր մարզչի հասցեին հայհոյելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
4. «Նոա» թիմի ֆուտբոլիստ Խամես Սանտոս Դաս Նեվեսի (34478) կողմից մրցակից թիմի պաշտոնատար անձին հարվածելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
5. «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանի (53887) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ)

Առաջնություն՝ Fastex Պրեմիեր Լիգա

Խաղ՝ «Վան» - «Նոա», 04.05.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի՝ 600,000 ՀՀ դրամի չափով:
2. «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկի՝ 700,000 ՀՀ դրամի չափով:

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նոա» թիմի ֆուտբոլիստ Գոնսալո Դե Ալմեիդա Գրիգորիոյին (53905) որակազրկել 4 (չորս) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 4-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Նոա» թիմի ֆուտբոլիստ Գոնսալո Դե Ալմեիդա Գրիգորիոյի (53905) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի հունիսի 4-ը ներառյալ: «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ 400,000 ՀՀ դրամի չափով:
4. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նոա» թիմի ֆուտբոլիստ Խամես Սանտոս Դաս Նեվեսին (34478) որակազրկել 4 (չորս) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 9-ից սկսած: «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի՝ 600,000 ՀՀ դրամի չափով:
5. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանին (53887) որակազրկել 4 (չորս) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մայիսի 9-ից սկսած: Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 3 (երեք) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանի (53887) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի հունիսի 4-ը ներառյալ: «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին

ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։